CONVERSE BANK

*Բոլորի համար*

e-Converse



# e-Converse

# Ինտերնետ-բանկային ծառայության օգտագործման հիմնական ՊԱՅՄԱՆՆԵՐ

*Ճիշտ ժամանակին,*
*ճիշտ վայրում:*

# *Հարգելի Հաճախորդ,*

Շնորհակալություն ենք հայտնում «Կոնվերս Բանկ ՓԲԸ-ի ինտերնետ-բանկային ծառայություններից օգտվելու համար: Խնդրում ենք ուշադիր ծանոթանալ ստորև նշված բոլոր պայմաններին, որոնք կարգավորում են ինտերնետ-բանկային ծառայություններից օգտվելու հետ կապված Ձեր և Կոնվերս Բանկի պայմանագրային հարաբերությունները: Խնդրում ենք պահպանել սույն պայմանները (այսուհետ՝ «Պայմաններ ) և դրանց բոլոր փոփոխություններն ու լրացումները: Ինտերնետ-բանկային ծառայությունների դիմաց գանձվող վճարները սահմանվում են Բանկի կողմից ընդունվող սակագներով (այսուհետև՝ «Սակագներ ), որոնք համարվում են Պայմանների անբաժանելի մասը:

Պայմանների իմաստով.

«Հաճախորդ , «Դուք , «Ձեր և «Ձեզ բառերը վերաբերում են «Կոնվերս Բանկ ՓԲԸ-ի ինտերնետ-բանկային ծառայություններից օգտվող ֆիզիկական անձանց:

«Կոնվերս Բանկ , «Բանկ , «Մենք , «Մեր և «Մեզ բառերը վերաբերում են «Կոնվերս Բանկ փակ բաժնետիրական ընկերությանը (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 13.09.1996թ. թիվ 5 որոշմամբ, գրանցման համար 57, վկայական թիվ 0164, հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1):

⇒ Ինտերնետի միջոցով Դուք կարող եք օգտվել Մեր հետևյալ ծառայություններից (այսուհետ՝ Ծառայություններ).





ա) փոխանցումներ հաշիվներով (վճարման հանձնարարականների ուղարկում),

բ) արտարժույթի փոխանակում անկանխիկ եղանակով,

գ) վարկերի մարման հանձնարարականների ներկայացում,

դ) կոմունալ և այլ վճարների կատարում,

ե) վճարումներ ArCa, Visa և Master Card քարտային հաշիվներին,

զ) ավանդների ձևակերպում ավանդային պայմանագրերի կնքման միջոցով,

է) հաշիվների մնացորդի և առանձին գործարքների վերաբերյալ քաղվածքների և տեղեկատվության ստացում,

ը) քարտային, վարկային և այլ հայտերի ներկայացում,

թ) Բանկին այլ հաղորդագրությունների ուղարկում:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԿԱՐԳ

⇒ Կոնվերս Բանկի ինտերնետ-բանկային ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է ունենալ Բանկում գործող խնայողական կամ այլ բանկային հաշիվ, հուսալի ինտերնետային կապով հագեցված համակարգիչ և էլեկտրոնային փոստի հասցե:

⇒ Ինտերնետ-բանկային ծառայությունները տրամադրվում են սահմանված ձևով ներկայացված դիմումի (Դիմում) հիման վրա: Դիմումի ստորագրումը վկայում է, որ Դուք ընդունել եք Պայմաններն ու Սակագները և պարտավորվում եք

ղեկավարվել դրանցով:

⇒ Ձեր Դիմումի հաստատումից հետո Ձեզ փակ ծրարով կտրամադրվի գաղտնաբառ (Password):

⇒ Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է www.conversebank.am ինտերնետային կայքի ինտերնետ-բանկային ծառայություններին հատկացված հատվածում մուտքագրել Դիմումում Ձեր կողմից նշված օգտագործողի անունն ու փակ ծրարով Ձեզ տրամադրված գաղտնաբառը: Ընդ որում, համակարգ մուտք գործելու համար կարող է պահանջվել գաղտնաբառի տառերի տարբեր կոմբինացիաների, տուգիչ նիշերի և Ձեզ նույնականացնող լրացուցիչ դաշտերի մուտքագրում:

⇒ Ծառայությունը կակտիվացվի Դիմումը Բանկի կողմից ընդունելուց հետո՝ Ձեր օգտագործողի անունն ու գաղտնաբառը մուտքագրելուց հետո երեք բանկային օրվա ընթացքում: *Խորհուրդ ենք տալիս առաջին անգամ համակարգ մուտք գործելուց հետո անհապաղ փոխել Ձեր գաղտնաբառը:*

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

⇒ Համակարգի անվտանգ հասանելիության համար Բանկն օգտագործում է օգտագործողի անվան և գաղտնաբառի մուտքագրման հատուկ մեթոդ, ինչպես նաև ինտերնետային հաղորդակցության անվտանգությունն ապահովող պրոտոկոլներ (128 բիթ երկարության SSL արձանագրություն (protocol)), որոնք նախատեսում են տվյալների փոխանցման անվտանգության բարձր մակարդակ:





Հետևեք, որ Ձեր հաշիվներով գործառնություններ իրականացնելիս Ձեր ինտերնետով գործարքներ իրականացնելիս ինտերնետային կայքի հասցեն (URL) սկսվի https:// -ով:

⇒ Ձեզ տրամադրվող գաղտնաբառը հայտնի չէ նույնիսկ Մեր աշխատակիցներին: Դուք իրավունք չունեք այլ անձանց տրամադրել կամ մատչելի դարձնել Ձեր օգտագործողի անունն ու գաղտնաբառը: Խորհուրդ ենք տալիս անհապաղ փոխել Ձեր գաղտնաբառը կամ դիմել Բանկ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այն հայտնի է դարձել երրորդ անձանց:

⇒ *Խնդրում ենք ուշադիր լինել Օգտագործողի անունն ու գաղտնաբառը (դրա կոմբինացիաները) մուտքագրելիս: Երեք անգամ անընդմեջ սխալ տվյալ մուտքագրելու դեպքում Ձեր մուտքը դեպի Ծառայություններից օգտվելու համար նախատեսված ինտերնետային կայք կարգելափակվի: Մուտքի հնարավորությունը վերականգնելու համար կարող են պահանջվել հաշվետիրոջը նույնականացնող Բանկի համար բավարար տվյալներ, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով դիմում-հայտի ներկայացում, ինչպես նաեւ այցելություն Բանկ:*

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

⇒ Ծառայությունների մատուցման համար հատկացված ինտերնետային կայքում Ձեր օգտագործողի անունն ու նշանաբանը

մուտքագրելուց հետո էլեկտրոնային եղանակով Ձեր և Բանկի միջև փոխանակվող բոլոր հանձնարարականները, քաղվածքները, տեղեկանքները, պայմանագրերը, ինչպես նաև այլ փաստաթղթերն ու տեղեկությունները համարվում են լիարժեք իրավաբանական ուժ ունեցող և հավասարեցվում Ձեր և Բանկի ստորագրություններով և կնիքով/դրոշմակնիքով պատշաճ ձևով վավերացված թղթային օրինակներին:

⇒ Ծառայությունները մատուցման իմաստով «Բանկային օր  են համարվում այն օրացուցային օրերը, երբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը բաց են բանկային գործառնությունների համար: Ծառայությունների մատուցման ժամանակը Երևանի ժամանակն է:

⇒ Ինտերնետային եղանակով Ծառայությունները մատուցվում են Ծառայության փվյալ տեսակի համար Բանկի կողմից սահմանված ժամկետներում և պայմաններով:

⇒ Դուք պարտավոր եք Ծառայություններից օգտվել բարեխղճորեն, Ծառայությունների մատուցման համար նախատեսված ինտերնետային կայքերը չկապակցել այլ կայքերի, ինչպես նաև ձեռնպահ մնալ ինտերնետային կայքում Ծառայությունների մատուցումն ապահովող համակարգչային ծրագրերը բազմացնելուց, կամ դրանց գաղտնի մասերը չարտոնված կարգով բացահայտելուց:

⇒ Մենք կարող ենք սահմանել կատարվող գործարքների սահմանաչափերի խմբեր (օրինակ՝ մեկ օրվա ընթացքում կատարվող գործարքների առավելագույն գումար և այլն): Դուք կարող եք ընտրել միանալ դրանցից յուրաքանչյուրին՝





Դիմումում նշելով համապատասխան դաշտի դիմաց:

⇒ Որպես կանոն, Մենք պահանջում ենք ինտերնետի միջոցով կատարվող 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող գործարքների լրացուցիչ հաստատում հեռախոսով, ֆաքսով կամ այլ կերպ: Այդուհանդերձ, Մենք կարող ենք նման հաստատում պահանջել նաև ինտերնետի միջոցով կատարվող այլ գործարքների համար և չկատարել գործարքը մինչև Ձեր հաստատումը ստանալը:

⇒ Մենք կարող ենք Ձեզ առաջարկել էլեկտրոնային իդենտիֆիկացնող սարքեր, մուտքային կոդեր կամ դրանք գեներացնող ծրագրեր և այլ միջոցներ և պահանջել յուրաքանչյուր գործարք հաստատել անհատականացնող միջոցների կիրառմամբ:

⇒ Դուք երաշխավորում և հավաստիացնում եք, որ Ձեր բոլոր հաշիվներով իրականացվող գործառնությունները կապված չեն փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ որևէ այլ անօրինական գործունեության հետ:

⇒ Մենք կարող ենք ձայնագրել Ձեր և Բանկի միջև հեռախոսային զրույցներն ու այլ հաղորդագրությունները: Այդ ձայնագրությունները հիմք են հնարավոր տարաձայնությունների կարգավորման ժամանակ:

## ՁԵՐ ԵՎ ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

⇒ Բանկը հետևողականորեն ձեռնարկում է Ծառայությունների անխափան և անվտանգ մատուցումն ապահովող պատշաճ միջոցներ: Այդուհանդերձ դրանք չեն երաշխավորում

գաղտնիության և անվտանգության այնպիսի մակարդակ, որը հատուկ է Բանկի տարածքում հաճախորդներին մատուցվող ծառայություններին: Դուք ընդունում եք, որ Բանկը պատասխանատվություն չի կրում ինտերնետի միջոցով գործարքներ կատարելիս տեղի ունեցող ուշացումների, հանձնարարականների չկատարման, բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների բացահայտման և նման այլ հանգամանքների հետևանքով Ձեր բոլոր տեսակի վնասների (ներառյալ՝ բաց թողնված օգուտների) համար, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասն ուղղակիորեն հետևանք է Բանկի աշխատակիցների դիտավորության կամ կոպիտ անզգուշության:

⇒ Մենք և Դուք կազատվենք միմյանց առջև ստանձնած պարտավորությունների խախտման համար սահմանված պատասխանատվությունից, եթե խախտումն արդյունք է կապի ընդհատումների, էլեկտրամատակարարման դադարեցման, պետական մարմինների ակտերի, քաղաքացիական հուզումների, երկրաշարժի, հեղեղումների և փվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի այլ հանգամանքների ազդեցության:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

⇒ Դուք իրավունք ունեք ցանկացած ժամանակ հրաժարվել Ծառայություններից՝ այդ մասին Մեզ գրավոր ծանուցելով: Ձեր գրավոր դիմումը ստանալուց հետո Մենք կդադարեցնենք Ձեզ ծառայությունների մատուցումը՝ Ձեր բանկային հաշիվներից մարելով Բանկի առջև Ձեր պարտավորությունները:





⇒ Մենք կդադարեցնենք Ծառայությունների մատուցումը Ձեզ, եթե լուծվել է Ձեր և Բանկի միջև կնքված բանկային հաշվի սպասարկման պայմանագիրը, կամ որևէ հիմքով դադարեցվել է Ձեր բանկային հաշիվների սպասարկումը:

⇒ Մենք իրավունք ունենք միակողմանիորեն դադարեցնել Ծառայությունների մատուցումը և/կամ լուծել Ծառայությունների մատուցման պայմանագիրը, եթե Դուք թույլ եք տվել Ծառայությունների մատուցման Պայմանների և Սակագների խախտում: Մենք նաև կարող ենք միակողմանիորեն դադարեցնել Ծառայությունների մատուցումը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ Ծառայություններն օգտագործվում են որևէ անօրինական նպատակով, կամ տեղի է ունեցել հաճախորդի օգտագործողի անվանման և գաղտնաբառի չարտոնված բացահայտում:

⇒ Մենք կարող ենք դադարեցնել Ծառայությունների մատուցումը, եթե 6 (վեց) ամիս անընդմեջ Ձեր հաշիվներով ինտերնետի միջոցով որևէ գործարք չի իրականացվում:

## ՎԵՃԵՐԻ ԵՎ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

⇒ Ծառայությունների կապակցությամբ Մեր և Ձեր ցանկացած տարաձայնություն ենթակա է լուծման բարեկամաբար՝ բանակցությունների միջոցով: Մենք և Դուք պարտավորվում ենք մանրամասն ուսումնասիրել յուրաքանչյուր տարաձայնության հիմքերն ու առաջարկել փոխադարձաբար ձեռնտու լուծում: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճը ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության իրավունքի համաձայն:

⇒ Դուք իրավունք ունեք Բանկի հանդեպ Ձեր գույքային պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին, եթե Ձեր պահանջի չափը չի գերազանցում տասը միլիոն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը: Նախքան ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելը Դուք պարտավոր եք Ձեր պահանջը գրավոր ներկայացնել «Կոնվերս Բանկ ՓԲԸ գործադիր տնօրենին՝ նշելով՝ թե որն է Բանկի խախտումը և ներկայացնելով խախտման փաստի հիմնավորումները: Ձեր պահանջը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Մենք կքննենք Ձեր պահանջը և կներկայացնենք վերջնական պատասխան: Մեր պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք կունենաք դիմելու ֆինանսական համակարգի հաշտարարին: Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

## ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

⇒ Դուք պարտավոր եք Բանկին ծանուցել Ձեր հասցեի, էլեկտրոնային փոստի, հեռախոսի և կապի այլ միջոցների, ինչպես նաև Ձեր այլ տվյալների փոփոխությունների մասին: Դիմումով նախատեսված հասցեներով Ձեզ ուղղված բոլոր





հաղորդագրությունները, գրությունները, պահանջները, հայցերն ու այլ փաստաթղթեր ուղարկելով՝ Բանկը կհամարվի այդ փաստաթղթերը պատշաճ կերպով Ձեզ հանձնած, քանի դեռ Դուք Բանկին չեք ծանուցել Ձեր տվյալների փոփոխությունների մասին և Բանկին բավարար ժամանակ չի ընձեռվել փոփոխությունները հիմք ընդունելու համար:

⇒ Մենք իրավունք ունենք փոփոխել սույն Պայմաններն ու Սակագները՝ Ձեզ էլեկտրոնային եղանակով տեղեկացնելով նախատեսվող փոփոխությունների մեջ մտնելուց առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ: Եթե փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո շարունակում եք օգտվել Ծառայություններից, Մենք կհամարենք, որ Դուք ընդունել եք փոփոխությունները:

⇒ Բանկի և Ձեր միջև կնքված բանկային հաշիվների բացման և վարման պայմանագիրը, Բանկի Սակագներ և դրույթները, Քարտերի տրամադրման և օգտագործման կանոնները համարվում են սույն Պայմանների անբաժանելի մասը: